

որ դէժէքի «Երբոս»-ին հետ-ընտելութեան է-
նառնադիմադրութեան, ձեռքդուռ լինելն յետոյ,
երկը տարի առաջ Ստորհոյմի Արեւելադիտաց
Համաժողովոյն ներկայացոյց 114 յօդուածներէ
բաղկացեալ աշխատութիւն մը — «Հայերն վե-
րո՞ւր սոսոքաբնականութեան սոսոքադիմադրութեան»¹:

Բուզգէ, իւր ետրուակերէնի աշխատու-
թիւնաց մէջ հայերէնն իբրեւ քորձի կամ քառի
կը գործածէ: Եւ ինչո՞ւ — Որովհետեւ, ինչպէս
սեռանք, լեզուաբանք կը պնդեն թէ Ետրու-
կերէնն ու հնդեւրոպական լեզուաց կը պատ-
կանի. Բուզգէ անոնց այդ կարծեաց դէմ՝ ցու-
ցնելու համար՝ թէ ընդ հայառանց հնդեւրո-
պական լեզուաց հետ ազգակցութիւն ունի, կը
դիմէ հին հնդկերէն, երանեան, ալբաներէն, յու-
նարէն, լատիներէն, կելտերէն, գերմաներէն եւ
այլ լեզուաց օգնութեան, առաջնութեան պա-
տիւր տալով հայերէնի որուն ռամօրէնին մանաւ-
անդ գաւառաբարբառոցն մէջ կը նկատէ եթէ
քերականական եւ եթէ բառական նմանութիւնք
ընդ ետրուակերէնի:

Ետրուակացոց տառերն՝ երրորդական եւ
ասիական ազգաց նման՝ փխնիկեցներէն առ-
նուած են մինչեւ վերջը պահելով տառից եւ
գրութեան ձեւերն,² վասն զի սեմական ազգաց
եւ հին Թունաց պէս ասոնք ալ աջ կողմէն դէպի
ջախ յառաջացուցած են: Այս տեսակ գրու-
թեանց մեծկակ պաշար կ'ընծայեն մեզ Լեւոնոսի
մէջ գտնուած արձանագրութիւնք³:

Ետրուակացոց՝ Լիւբեացոց հետ ունեցած
բարեկամութեան եւ Եգիպտացոց հետ ունե-
ցած պատերազմին քննարկը չէ՞ միթէ Ալիսմի

¹ Որով տարի մը յետոյ ետրուակերէնի 185 բառից
միայ մասնաւոր աշխատութիւն մը հրատարակ հանց — «Ե-
րբոս»-ին եւ հայկա-ն բառաբանութիւն:

² Ինչպէս ՎՅԱ — Kel.

³ Մասկոյր կ'ընէ թէ Եգիպտացոց ծիծ հարու-
տութեան ժամանակ (Վեդար Կ. 4.), Սեօր Առաջին Ռամ-
ան օրոյն մեծեղն հայապէս մէջ բարձրացաւ զահաւն վայր:
Երբ պատմութիւն ասան տարիական եղաւ, սիսաւ աշխատեց
Առաջին եւ Արարացոց հետ, պնդեալ որ փոքր Ափոյ մե-
ղովորդներն անպէ, ինչպէ՞ս՝ Հարգանա, Տարբը (ս. 38), սե-
նացի) կոչուած ազգերն, Ափրիկէի՝ Միկերկրական Գեղեր
անցնելով զարմուկեցեան Լիւբեացոց հետ, Ռաման Բ. ա-
սոնց բուրն ալ յայցեցի:

Ռաման Բ. յայտը յամուրիսէն յետո՞ր Եգիպտոսի
գահը գտաւց Միկերկրական անուն վախճանն տարեկան
ծերութիւն էր, որ՝ ըստ Լեւոնոսի միջ Սեօր Առաջին հետ միե-
նայն անձնաւորութիւնն է. սակայն Լեւոնոսն իւր «Լիւբե-
ան» պոչը հին պատմութեանը, դրած ժամանակ Բ. հասա-
րէնի («Եգիպտացոց») մէջ իրեն առաջնորդ կ'ընտրէ բաղ-
կացապաշտ Մասկոյրն, որ Սեօր Ա. եւ Միկերկրական
տարբեր անձիք կը նկատէ. ուստի մեր ալ կը հետեւնիք
Մասկոյրի շարքին:

Փոքր Ափոյ եւ Լիբիոյ թշնամի ստորուրդն՝ Ե-
գիպտոսի գահուն վայր զաւաճալ թագաւորն ծերութեան
սգրան ցտեղէ ապշելով՝ Հարգանացի, Տարբը, Լիւբե-
ան, եւ այլք իրեն նախըմ Սեօր Առաջինի հետ մասն Լի-
բիոյ Եգիպտոսի, եւ անոր միաբանութեանը յարակիցս
Սեօր Առաջին, բայց անձեք ալ յայցեցեան կրին Եգիպ-
տացիներէն:

Թանգարանին մէջ պահուած վերոյիշեալ մու-
սիան: Բ՛լ կրնայ հերքել թէ Ետրուակացոց
գեղարուեստին չէ խառնուած եգիպտական ոճն.
Նորագիւտ յիշատակարանք իրենց յաղթ գլուխ-
ներով հաստատական վկայութիւն կու տան մեր
խօսքին: Արդեօք կարելի չէ՞ ըսել՝ թէ Ալիսմի
յիշեալ մոմիան յեգիպտոս վարձանեալ Ետրու-
կացի իշխանի մը լինի, եւ «Իբրեւ աւելորդ կտաւ
գործածեալ» պատատանաց երէզներն եւ անոնց
վրայի գրերն մանաւոր նշանաւորութեամբ գործածած
ըլան ինչպէս սովոր էին ընել Եգիպտացիք:

Մեր սոյն կարծիքը կ'ապացուցանէ այն երբ
հրատարակեալ կը տեսնենք թէ երէզներուն
վրայի յիշատակարանն կամ աղօթքն (ըստ սո-
վորութեան), որ «Եգիպտական պապիրոսէ գլան-
ներու պէս գրուած է սիւն սիւն», անընդհատ
կը կարգացուի առանց իմաստի պայլարութեան:

Գ. Յ. ՊԵՏՄԱՆՅԱՆ



ԱԶԳԱԳՐԱԿԱՆ

ԼԵՌՆԵՐԻ ՎԵՐՈՅ ԲԵՆԵՔԻՆԻ ՀԱՅՈՆԵՐԻ ՄԵՍԻՆ
ԿԱԼՎԱՆԵՆԻ ԵՐԱՊԵԼՆԵՐԸ

(Երբոս-նախ-նիւ եւ Իւր)

Ի՞նչ պէ՞ չըջանին վերաբերեալ աւանդու-
թիւններն ի՞նչ աստիճանի տարածուած են Հայ-
երի մէջ, ապացուցանում են Պ. Էմիլի միւս ա-
ռաջ բերած վարիանները: Այդ առապիւ-
ներից մէկը կապեալին Հիդար է անուանում,
որ իբր թէ Արտաւազդի որդին է եղել:

«Կար չկար մի թագաւոր կար, անու-
նը Արտաւազդ: Նա մի գիծ որդի ունէր անուը
Հիդար: Արտաւազդը մեռնելու թագաւորու-
թիւնը Հիդարին չտուեց, նա գիծ էր: Այդ
պատճառաւ մեր երկրում սեղի ունեցան խառ-
նակութիւններ եւ շատ աւերածինք: Մի անգամ
Հիդարը ձի է նստում, հրամայում է փող փակ
եւ յայտնել, որ ինքը ցանկանում է թագաւորել,
եւ ընտրեալ ձիաւորների հետ որսի է գնում:
Նա կամրջին հասել էր չէր հասել, չար հօգին
դիպչում է նրան եւ նա գետն է ընկնում ու խեղ-
գում: Ձիաւորները լուր են տարածում թէ
աստուածները բռնել են Հիդարին եւ շղթայա-
կապ անելով փակել են Մասիսում՝ սեւ սարում:
Երբու շնոր՝ մէկը սպիտակ միւսը սեւ՝ կրծում
են նրա շղթաները: Ցարապ վերջին՝ նրա շղթա-
ները բարկանում մազի հաստութիւն են ստա-

նում: յձե՛ն նրանք կտրուին, Հիգարը դուրս կը գայ եւ մեր աշխարհին վերջ կը տայ: Դրա առանց առեւելու համար կատարողները սահմանել են որ տարւայ վերջին՝ Կաւսարդի ամօն առջինն օրը բոլոր դարբինները, ինչ գործով էլ զբաղած լինին, երեք անգամ մուրճով սալին զարնեն, որպէս զի Հիգարի մաղի հաստութեան հասած շղթաները նորից ամրանան, ապա թէ ոչ Հիգարը դուրս կը գայ եւ մեր աշխարհին վերջ կը տայ:»

Տաճկահայերի մէջ էլ շրջում է նման աւանդութիւն, որի գործողութեան տեղը Վանի կողմերն է դարձրած: Վանի ամրոցի արեւելեան կողմում նկատելի է մի փոքր լեռնաշղթայ երևը գաղաթիւներով, որոնցից միջինը անուանուում է «ՄՏերի դուռ»: Կա ներկայանում է իբրեւ լեռի յլիւում զրան ձեւով մի օխոյ, որի վրայ վերեւից ծորում են սեւացած ջրի կաթիլներ: Աւանդութիւն կայ որ այնտեղ գրան ետեւ Նստուծոյ հրամանով բանտարկուած է ՄՏերը իր ձիով: Դրան ետեւ կայ նաեւ մի անիւ, որ երկինք ու երկիրը շարժողութեան մէջ է պահում: ՄՏերը աչքը սեւեռած անիւին դիտում է նրա պտոյտները: Երբ որ անիւը կանգ առնի, ՄՏերը փրկութիւն կը ստանայ, դուրս կը գայ եւ կը կործանի աշխարհս:»

Ինչպէս երեւում է յարգելի հեղինակին ծանօթ չի եղել Գ. Ստոյանովսկիի ՄՏերի մասին պատմութիւնը, անձնաթիւն է նաեւ Պ. Ալեքսանի արգել առէ ու 1889-ի հրատարակած առաստելի մի ուրիշ վարկածը: Այս պատկերացրեալը համարհարկուողք ենք համարում: այստեղ համառոտ յիշեալ երկու վարկածներէն էլ առաջ բերել:

Այս երկու վարկածներէն էլ պատմուած են նրա ական մարտման ՄՏերի մանկական հասակից սկսած մինչեւ նրա սպիւն մէջ փակուելու նրա գլխով անցած արկերէն: Արդէն իբրեւ նորասին մանուկնա իսկոյն աչքի է ընկնում: Կրա ամբար փակած մասները ուժով բաց անելով ապի մէջ արեան կաթիլն էր դնում: Եւ «ինչ խալիս տղէք տարով կը մեծանէր ՄՏեր օրով, ինչ ամում: ՄՏեր սշաւով», ինչպէս Սմբատը գի. զանգիներն շարժարեւոր համար հրապայտում է նրանց գետնի մէջ ցցած ձողը հանել: ՄՏերն էլ իր օրեցօր անող սլոք գործ է դնում, որ կամ՝ «գարսի ծառի երկ կտոր, բաղդի տղէք կը խնձուցի, կը շարժար բարտա ծառին, ծառու ծեր կը թորկեր: Ինչ ծառու ծեր կը բարձրացնի, բաղդի տղէք անկն մէջ ծիծ մէջ մահաց կը լինի», եւ կամ Սամազ գետի միայ կամուր է լինում: Եւ երբ մարդիկ անցնում են նրա փայտով ՄՏեր մարդիկ կը սփրկ կտար, որդիք կը կամուր լիս: Եւ մի ծառայ եմ հարաւ ընդմէ վրայ իմ կամուրն իմի կ'ընթեր, իսկ երբ նրանք անցնէին, երբ էն անցնում» ՄՏեր կտոր որդիք կամուր ձի խաւարի եմ՝ կտոր, զուր ընդմէ կտոր որդիք կը ինչպէս Սմբատը Աստուծոյ դէմ ուժ ցործ գնել կամեալով արժանանում է նրա պատմով, նշմարելու Գաւիթը անկնում է իր անհասցանքի եւ շար որդուս տակով: «ՄՏեր, որ տիւ իսկ եմ կ'ուր արի. — կանչել եմ քաղցրիկ Աստուած, թեւ մտնէ իմ քաղցրիկ ընկիւն տիր, չի մար ընդի, չուր քրիստոս կեայ դաստատան:»

Այսպիսի փոքր տարբերութեանը համապատասխանում է թէ վերական առասպելին եւ թէ Հայոց Արատազայի մէջ Հիգարի մասին պատմականներն, լայն օրանից աւելց պէտք է եմքարել: Եւ սիւրբական ՄՏերին իմ վերաբերում, այլ ժողովրդական երեւակայութեան մէջ սեղի է անցնել միայն միս մի գործողութիւն. բառ որում երկու (կամ զուցե աւելի) առասպելական հերոսները գործերը մէկին: աւելի զգրեղեն են վերաբերուել: Այդ միացումը ստացած շարուն

Հայկական առասպելը հետաքրքրական է մանաւանդ նրանով, որ առաջինը մի օրինակ ունիք, թէ ինչպէս էին Տին վիպական աւանդութիւնները պատմական անձնաւորութիւններու վերագրուում: Եւ Մովսէս Խորենացին ինքը իր աղբիւրները մասնանշել անելով հշտացնում է մեր աշխատանքը: Նրա պատմածին համաձայն հօրից անիւնուած Արտաւազգի մահը հետեւեալ կերպով է առաջ եկել: (Գիրք Բ. գլ. 45) «Յետ տակաւին առաւոր թառաւորելոյն իւրոյ, անցնելով զկամրջան Արտաշատ քաղաքի, որսալ կինճս եւ իշափայրիս զակամրջ Գինայ, աղվեալ իմն ի ցնորից խնայաւարանաց, ընդ վայր յածելով երկվարան, անկանի ի խոր իմն մեծ, եւ խորատոյղ իշալ անհետի:»

Թագաւորի այդ օտարոտի եւ խորհրդաւոր մահը շարժել է ժողովրդի երեւակայութիւնը, եւ առիթ տուել այդ դէպքը միացնել Տին առասպելներին ծանօթ նշանանման անցքերի հետ: Արտաւազգին նշյն անձնաւորութիւնն են դարձրել, ինչ որ պարսկական Մահապին է փորտուսում, կամ ինչ որ Տին իրանական Ափաշապին վիշապն էր, որ իշատակուած է Աւետում: Յայտնի Տին ապգային հերոսի կամ աստուծոյ վիշապի, այն է՝ խաւարի եւ շարութեան հողոյ հետ տեղի ունեցած մարտի առասպելը իրանցներին մօտ քաղաքական կերպարանք է ստացել: Վիշապին հաւասարեցնում են բռնակալի անձնաւորութեան ուրիշ լծնամի ցեղի իշաղի հետ եւ այդ բռնակալի հայածանքներին պատուում է Պարսից ազգը իմ որ եւ է ազգային հերոս: Մովսէս Խորենացին մատնանշել է անում ժողովրդական երեւակայութեան այդ արդիւնքի վրայ՝ առաջ բերելով ժողովրդական առասպելը, ըստ որում Արտաւազգը կատարուել էր Ափաշապին ցեւեղից կանանցից, եւ այդ տեղի որ ունեցել դեռ նրա մանուկ հասակում: «Վիշապաւորը գուրացան զմանուկն Արտաւազգ եւ դեւ փոխանակ եղին», Այդպիսով ժողովրդի երեւակայութեան մէջ Արտաւազգը դեւ է դարձել՝ Ափաշակին ցեղակից. որը (Ափաշակը) սկիզբը վիշապ էր, ապա Մեղաւցը թագաւոր դարձաւ, լինելով

նախկին ինչ Պ. Միլերի յօդուածի հետ կապ չունենալու անկողի Մահարում այստեղ կրկին: Առասպելի վերում գտնում ենք համապատասխան վերական, Հայկական եւ միւս առասպելներին հետեւաց (Ալեքսան, Գաւիթ եւ ՄՏեր, Ընդի 1889, էջ 59). «Պատեն ամեն խաւարածման դէպքը ՄՏերի քարի տիւս: Կը բացուի, մարդ չի տեսնէ, հրամանը չկայ մարդ տեսնայ: Մէկ տարուս խաւար ի տեսն: Էն խաւար կով բերի անայի, որմէից փախի, յետեւ որդակ գաղի, ընկիր են քար: Քարի տիւս բացուի, ՄՏեր քարի միջին ելի: Ի, խաւար էնի տուն խաւար տուի: չուր գացած ի ճեմիս, տիւս փախի: Ի ՆՀ հրամանը չկայ մարդ տեսնայ, Չուր քրիստոս կեայ դաստատան:»

Եւ. Թրքմ.

Հայոց ու իրանի ազգային թշնամի: Մովսէս Խո-
նենացին նուիրում է Աթգահակին՝ Կիւրոսի եւ
Նրա ժամանակակից եւ բարեկամ Տիգրանի թշնա-
մուն մի քանի գլուխներ (Գիրք Ա. իդ—իթ.)
եւ այդ տեղ նա խառնել է շատ պատմական
կէտեր իրանեան—Հայկական ժողովրդական ա-
ռասպելների հետ: Մեզ հետաքրքրում է միայն
այն ինչ որ պատմում է Աթգահակի
Երկու անսակ տեղի ունեցող մահի մասին: Մէկ
աւանդութիւնը պատմում է որ նրան պատե-
րազմի դաշտում սպանել է Տիգրանը: Միւսը
պարտական աւանդութիւնն է, որ Խորենացին
առաջ է բերում իբրեւ իր առաջին դքի վեր-
ջաբան: «Եւ Հրուգենայ ումեմն (ամենեւեւ Հա-
նամէի փրկիտունը եւ Զենդաւեստի թրայտաւունը)
կապեալ զնա (զԱթգահակ) սարեօք պղնձիք եւ
ի լեռան տանել՝ որ կոչի Դրմբաւընդ (Գեմաւ-
ենդ): Այլ եւ ի ծանապարհի զննջելն Հրուգե-
նայ եւ Իրարասպայ (Աթգահակի խականն ա-
նունն — Աւեստի Բեւարասպա) քարշնի ի բլուրն
եւ զարթնելն Հրուգենայ եւ տանել զնա յայրս
ինչ լերինն եւ կապել եւ զինքն անդրի ընդդէմ
նորա Հաստատել, յորմէ պահուցեալ հնազան-
դեալ կայ շղթային եւ ոչ զօրէ ելանել եւ ա-
պականել զերկիր:»

Այդպիսով հիմնուելով Մովսէս Խորենա-
ցու առաջ բերած նիւթի վրայ՝ կարող ենք եզ-
րակացնել որ Արտաւազդի Մասիս լեռանում
փակուելու առասպելը նշան է ինչ որ է Աթգա-
հակի Գեմաւենդում փակուելու առասպելը:
բայց մենք աչքի անցնենք իրանական առասպել-
ները քաղելով իրանական աղբիւրներից, որով-
հետեւ նրանց մէջ կը գտնենք այն առիթը, որ
պատահում է եղել վէպի մէջ Արտաւազդին նմա-
ցնել Աթգահակին:

Սոհակի պատմութեան եական բովանդա-
կութիւնը ինչպէս փրտուսին (Ժ դարում) է
պատմում, հետեւեալն է Թէհմուրազից յետոյ
(Զենդաւեստում՝ Թէհմուրուպ) պարսկական
գահն է բարձրանում՝ նրա որդի Զեմշուղը (Զեն-
դաւեստում՝ Խւմա—Հշոցտ (°):) Դա ազաւա-
րեց 700 տարի, նրան հնազանդում էր ամբողջ
սիեզերքը, նրա հնազանդում էին զեւեր եւ
փերիները: Աշխարհաշէն թագաւոր լինելով՝ նա
տարածեց Պարսկաստանի մէջ քաղաքակրթու-
թիւնը, ժողովրդին սովորցրեց ղէնքեր շնելն, շո-
րեր կարել: Հպատակները դասակարգերի բա-
ժանեց, տներ եւ նաւեր շինեց: Այսպէս անցան
300 տարի եւ այդ ժամանակ մարդիկ չգիտէին
մահ, աշխատանքի մասին գաղափար չուէին եւ

զեւերին գործ էին անում ինչպէս ծառաներ:
Ասկայն բախոր թագաւորին ծանապարհից հա-
նեց, նա հպարտացաւ եւ պահանջում էր որ
իրան երկրպագեն: Այն ժամանակ Աստուծոյ
բարիքները հեռացան նրանից:

Այդ ժամանակ Ցասիի (Արաբիա) երկրում
իշխում էր բարեպաշտ Մերդաւար: Նա մի որդի
ունէր Դոհակ կամ Սոհակ անունով, որին նմա-
նապէս Պէշվերասպ էին անուանում (10,000
ձիերի տիրապետող): Մի անգամ Սոհակի մօտ
եկաւ Իբլիսը (Սմիրնա) եւ թելադրեց նրան տի-
րանալ հօր գահին, բայց դրա համար պէտք էր
առաջ հօգը պահել: Մի այդի կար ուր Մեր-
դաւար ամեն օր շրջագայելու էր գնում: Իբլիսը
Սոհակի համաձայնութիւնը ստանալով այն տեղ
մի խոր փոս է փորում, յարդով ծածկում եւ
Սոհակի հօրը այնտեղ գլորելով սպանում: Այդ-
պիսով Սոհակը իբրեւ հայրասպան տիրանում է
գահին: (Նկատենք որ Արտաւազդն էլ դէպ ի
իր հայրը վատ է վերաբերում, եւ ենթադրուում
է նրա անեծքին: Գուցէ հէնց այդ է եղել պատ-
ճառ, որ Դոհակի առասպելի միւս կէտերն էլ
Արտաւազդին են վերագրել:) Յետոյ Իբլիսը տի-
րուն երիտասարդի կերպարանքով ներկայա-
նում է Սոհակին, եւ խոհարարի պաշտօնով նրա
մօտ ծառայութեան մտնում: Նա սկսում է առու-
ջին անգամ իր տիրոջը համար կենդանիների միջ
կերակուրներ պատրաստել, մինչդեռ մինչեւ այդ
ժամանակ մարդիկ միայն բուսական կերակրով
էին ապրում: Իբլիսը իր այդ ծառայութեան
համար աղաչում է իր տիրոջը, որ թող տայ
նրա՝ թագաւորի ուսերը համբուրի: Խաւարի
հոգւոյ համբուրից Սոհակի ամեն ուսի վրայ
դուրս եւ գալիս մի սիւսեւ օձեր: Այդպիսով այդ
առասպելում մարդ թագաւորը քիչ քիչ վե-
րադաւնում իր սկզբնական պատկերին — վե-
շապին: Սոհակը միջոցներ է փնտռում վեշապե-
րից աղատուելու, հրամայում է նրանց կարել,
բայց նրանք նորից աճում են: Բոլոր նրա հրամա-
նով հաւաքուած բոժիշկները անկարող եննրան
օգնել: այն ժամանակ երեւում է Իբլիսը բժշկի
կերպարանքով եւ առաջարկում է նրան մարդի
ուղեղով կերակրել օձերին այդպիսով նա մտա-
դիւ էր աշխարհիս երեսից մարդկային ցեղը քնել:

Այդ ժամանակ իրանում տեղի է ունե-
նում ապստամբութիւն եւ ապստամբները հա-
լածելով Զեմշուղին, նրա տեղ հրաւիրում են
Սոհակին: Զեմշուղը փախում է եւ 100 տարի
Սոհակից ծածուկ ապրում, մինչեւ որ սա նրան
բռնում է եւ մէջից երկու սղոցել տալիս: Սո-

հակը թագաւորում է 1000 տարի կատարելով անթիւ չարագործութիւններ: Ամէն օր նրա վիշապներին կերակրելու երկու մարդ են բերում: Այդ ժամանակ ձեմիւնդի ցելոյց ծագում է փերիդունը՝ Սոհակի ապաւայ սպանիչը՝ նրա հօր Աբդիլին՝ Սոհակը սպանում է, բայց մայրը՝ Փերանիլը՝ ապատում է փերիդունին անստուգում եւ որդուն կերակրելու յանձնում է զարմանալի կերպարանք ունեցող Պերմայէ կովին: Բայց այդ տեղ էլ են գալիս Սոհակի մարդիկը նրան փնտնելու: մայրը փախչում է Հնդկաստան եւ ապաստանում մի փոքր հովուի մօտ, որը իր արքայածառանգին պահում պահպանում է ամենայն խնամքով: Սոհակը ցանկացածին չգտնելով սպաննել է տալիս Պերմայէ կովին: փերիդունը իր 16 տարեկան հասակում դիմում է մօրը եւ նրանից իր հօր մասին տեղեկութիւն խնդրում: Փերանիլը յայտնում է նրան, որ նա Թէհմուրազի թագաւորական ցելոյցն է, որ նրանց հալածում է Պահակը, նրա հօր Աբդիլին սպանիչը: փերիդունը երգում է Սոհակից վրէժ առնել: Հանգամանքները նպաստում են նրա նպատակին: Իսպահանից դարբին Ապվէի 17 որդիքը ծառայել էին Սոհակի օձերին կերակուր, նա կամենում է նրա 18 որդիք՝ վերջին որդուն էլ խելը: Գուսահատուած Սոհակը հրահրում է ժողովուրդը չարագործի դէմ ապստամբելու, եւ ինքը զրօշակի տեղ իր կաշեայ փարթուկը (գոգնոցը) նիզակի ձողու վրայ ամրացնելով ապստամբների գլուխն է անցնում: Ըուտով նրա շուրջն են հաւաքւում մեծ բազմութիւն, որ փերիդունին գլուխելով իրանց առաջնորդ են կերակրում: փերիդունը կովի գլխանի հապին լախտով զինուած գնում է Սոհակի վրայ: Մի շարք արկածներից յետոյ փերիդունը իր լախտի հարուածով Սոհակին գետին է գլորում, բայց Սերոշ հրեշտակի խորհրդով փոխանակ նրան սպանելու, քաշում տանում է Դեմաւենդ սարը: Այսպէս մի խոր այրում Սոհակին բռնեւում են ժայռի վրայ, ուր նա երբեմն երբեմն իր կատաղութիւնը արտայայտելով առաջ է բերում իրերաշարժը՝

Ի վերջոյ առաջ բերնիք ճանապարհորդ

Մորիերի տեղեկութիւնը Դեմաւենդի տեղական առասպելների մասին՝: «Դեմաւենդ քաղաքում, որ գտնւում է համանուն լեռան ստորոտում, նկատելի են աւերակներ, որ Սոհակի ամրոցի աւերակն են կրում: Օգոստոսի 31 ին այնտեղ տեղի

է ունենում տնտեսութիւն ի յիշատակ բռնաւորի հործանման: Այդ օրը թէ քաղաքի եւ թէ շրջակայքի բոլոր ժողովուրդը հաւաքւում են եւ իրանց նուիրում ուրախութեան: Չիւրի կամ ջրիկների վրայ նստած անցուգարծ են անում, ամեն տեղ լսելի են լինում ուրախութեան աղմուկներ, իսկ երեկոյին ամրոցը քաղաք եւ տները լուսաւորուած են լինում: Տեղական աւանդութիւնը պատմում է որ մի երիտասարդ վճռել էր սպանել Սոհակին, որ ապրում էր Դեմաւենդ լեռան գլխին եւ ամէն օր իր ուսերի վրայ օձերին կերակրելու համար երկու մարդ էր յափշտակում: Հերոսը խոտացել էր, եթէ ձեռնարկութիւնը յաջողութիւն, մերձակայ լեռան զագապին կրկն կը վառէ: Սպանելով Սոհակին նա կատարում է իր խոստումը եւ վառում պայմանական կրակը: Ի յիշատակ այդ դէպքի ամեն տարի կատարում են այդ լուսաւորութիւնը: Տեղացիք հաւատում են նաեւ որ կապեալ Սոհակը ապրում է ստորերկրեայ այրում եւ պատճառում է երկրաշարժ, որ այդ կողմերը յաճախ է պատահում:»

Յիշատակելով այս բոլոր ախական առասպելները՝ շերքեսականը, օսեսականը, վրացականը, հայկականն ու իրանականը՝ նկատում ենք որ մեր աշխի անցած անձնատարութիւնն որ Աստուծոյ կամքով ժայռի վրայ բեւեռած հսկայ է, թիչ թիչ օձի կերպարանքի է փոխւում, իսկ նրան բեւեռող աստուածը բոլոր ժողովուրդների առասպելներում տարածուած աստուծոյ կամ վիշապասպան հերոսի պատկերն ստանում: Այդպիսով կարող ենք յիշեալ առասպելները երկու խմբի բաժնել. առաջինին վերաբերում են այն բազմութիւն առասպելները, ըստ որում մի աստուած կամ հերոս մի որեւէ լեռան խորքերում կապում կաշնակուում է մի վիշապ, երկրորդ խումբը պատմում է մի հսկայի մասին, որ մի որեւէ ժայռի վրայ բեւեռուած է: Այն երեւոյթը, ըստ որում հին սկզբնական վիշապը իրանական Ափրահահակ (վիգական Abi) աստիճանաբար Ափրահակ թագաւոր է դառնում եւ յետոյ Սոհակ թագաւոր՝ անդերեւցոյց է տալիս, որ առաջին խմբի աւանդութիւնները երկրորդից աւելի հին են: Սակայն ժողովրդական աւանդութիւնների պատմութիւնում այնպիսի երեւոյթ հազու է պատահում, որ առասպելի կերպարանափոխութիւնը միանգամայն դուրս մղէ սկզբնականը: Ընդհակառակն սովորաբար նախնականը շարունակում է նշմաւածամանակ առաջինի հետ գոյութիւն ունենալ,

1 Spiegel, Eran'sche Alterthumskunde, I. p. 530 —540.

2 Morier, Second journey, p. 357, այս կտորը թարգմանել է Зннгоооооо, стр. 60.

եւ շատ անգամ՝ Հէնց անցողական երկուսի խառնուրդից առաջացած ձեւն է անհետանում: Այդպէս էին Յոյների մօտ պահպանուել է նաեւ այն առասպելը, որ մենք առաջին խմբին վերագրեցինք: այն է Տիփոնի առասպելը:

Տիփոնի եւ Պրոմէթէոսի միջի յարակցութիւնը յայտնի է եղել նաեւ Եսթրիոնին իր կաշկանդեալ Պրոմէթէոս որդերգութիւնում: Ովկիանոսն որ ցանկանում է Պրոմէթէոսին սիրփել, պատմել է տալիս Տիփոնի առասպելը: «Ես տեսայ Երկրածնունդ Տիփոնը, որ Երբեմն ապրում էր Սիկիլիայի այրերում եւ խղճադի կռուուէր Հարիւրգլխանի Տրէշի վրայ որ ուրիշներին տաքմանքի էր ենթարկում: Դա մարտնչում էր աստուածների դէմ, իր զարհուրելի երախներից մահ թորելով: Դրա աչքերից փայլում էր գորգոնեան կայծը եւ կարծես սէր լինէր Զեւսի կարողութեան: Բայց նրան դիպաւ Զեւսի արթուն նետը, արագընթաց կայծակը, խանձող Տուրը: Դա պատճառեց նրան բարձրաձայն ողբ: Ուղղակի կրճէին վրայ Տարուած տառալով՝ կայծակը նրան ուշագնաց էր արել եւ նրա աստուկութիւնից լլկուած զգուհեց օյտերից: Իսկ այժմ՝ նրա թողանալով, արագաց ցած մարմինը՝ գտնուում է ծովի նեղուցում: Նշանայի ստորոտում: Լերան գագաթին Հեփեստոսը կռանհարում է հալուած զանգուածը, բայց այն սեղից երբեմն արտափչում են Տրոգեհի Հեղեղներ, լափելով իրանց վայրենութեամբը Սիկիլիայի պողպատեւր գաշտելը»:

Իրաւ է, եթէ Պրոմէթէոսի վրայ նայինք՝ ինչպէս նրան մեզ ներկայացնում է վերջերում Յունաց բանաստեղծ-փիլիսոփաների երեւակայութիւնը, այն ժամանակ դժուար է այդ մարդկութեան բարերարի եւ նրա պաշտպանի մէջ վիշապազուն գտնել: Բայց պէտք է աչքի առնել այն մի քանի կէտերը, որ պահպանուել են կուլտում (կրօնական պաշտամունքում) եւ սեղանական աստուածներում, եւ այն ժամանակ այդպէս պակասութիւնն աւելի ամենրեւ կը դառնայ: Պրոմէթէոսը պատանում է Տիտաններից եղին, ուղիմպական աստուածներին թշնամիների շարքին, ինչպէս Բիարեւոր, Ատլանտոր եւ այլք: Ինչպէս Տիփոնը — որ է մարմնացում այն կրակի, որ պահուած է Տրոցայա լեւների անդունդներում, — նշնպէս Պրոմէթէոսը կրում են Տրակիի աստուծոյ մականուն (ὁ πυρφόρος θεός) եւ նա երկբից կրակը երկիր է իջեցնում, թէ եւ այդ կրակը կուլտորի նշանակ (symbole) է դառնում եւ ոչ նրա կրօնական նշանակ, ինչպէս Տիփոն-Գոհակի

կրակը: Ի պատիւ Պրոմէթէոսի ամեն տարի Աթենքում տեղի էին ունենում վառած գերոններով վաղիւ միջումն, որի ժամանակ նա էր յաղթող հանդիսանում, որ նախ գերոնը ձեռին նպատակին կը հասնէր¹:

Տիփոնի ու Պրոմէթէոսի բարեկամութիւնը նկատելի է նմանապէս այն գերից, որ Հեփեստոսը կատարում է Զեւսի թէ մէկն է թէ միւսի հետ վարած կռուում: Հեփեստոսը որդիմկական այդ դարբինը՝ շինել է իւր դարբնից Տիփոնի մարմնի վրայ. էլի նա է՝ որ Զեւսի հրամանով, ինչպէս երևում է Եսթրիոնի որդերգութեան սկզբից, կաշնադնում եւ բռնուում է Պրոմէթէոսին ժայռին վրայ: Շեշտեմք նաեւ այն զուգահեռական նմանութիւնը Հեփեստոսի անձնաւորութեան եւ (հնդկական) վետական Kavya uca-dāhi մէջ ըստ որում վերջին առաջնորդում է Ինդրա աստուածուն, երբ նա Abi վիշապի հետ կռու է մտնում եւ նրա համար շանթ է դարձնում, եւ իրանական իսպահանցի դարբին դաժնի մէջ, որ առաջինն է ապստամբութեան դրօշը Սահակի դէմ բարձրացնում: Այդ վիշապապան դարբնի յիշատակը² պահպանուած է նաեւ հայ եւ պարսիկ դարբինների սովորական սալին զարկելու ասանդութիւնում, որպէս զի ամբողջութիւն վիշապ ճակայ բարակացած շղթաները: Այդ հարուածները զարկում են ոչ միայն արեւելքում, այլ նաեւ արեւմուքում՝ Գերմանիայում, որ ապացուցանում է այդ աւանդական սովորութեան խորին հնութիւնը: Այդպէս օրինակի համար Տիփոնի մի քանի կողմերում տօների նախորդ օրերը դարբինները զարկում են երեք հարուած սալին, որպէս զի ամբողջընէն իւրիշների շղթաները, որը այլապէս դուրս գալով աշխարհս կ'աւերէր: Ուրիշ կողմերում, օրինակ Ալկիդէնայում, Լիցիֆերի սեղը բռնում է մի գայլ, որ նստած է երեքտակ երկաթի շղթաների տակ, ինն երկաթի դռների ետեւում: Ստորին Բաւարիայում՝ Վալդպիլենեան դարբնոցից վերջին դուրս եկող դարբինը մի զարկ է տալիս սալին, որպէս զի սատանան չկարողանայ սղոցել իր շղթան: Դա սղոցում է անընդհատ, այնպէս որ Սուրբ Յակոբի տօնին (Յուլիոսի 25ին) շղթան բարականալով թիկն հաստութեան է հասնում. բայց այդ օրը, եթէ կատարուած է սովորութիւնը, շղթան նորից հաստանում է:³

¹ Pausanias, I, 39.

² Հմտ. русскую легенду о кузнеце и Девианы и Борхет и Тихёв.

³ Իրարմանութիւններ տես Manbaird, Germanische Mythen, p. 87.

Սկզբնական վիշապի դերը սատանային յատկացնելը գտնում ենք նաև, ինչպես հաղորդում է Հան՝ Ալբանացիների մաս: Նրանց ասելով՝ սատանան մեծ շղթայով բռնեռում է ժայռի վրայ: Նա լիզում է շղթան ամբողջ տարւայ ընթացքում եւ աւագ Շաբաթ օրը նրա օղակները այնպէս բարակ են, ինչպէս լուբիի տերեւները, բայց Յարութեան կիրակի օրը գալին է Փրկիչը եւ շղթայում է աստանին նոր շղթայով:

Օձից մարդ դառնալու տիպին է պատկանում նաև սկանդինավական Լոկին (Loki) որի յարակցութիւնը հին արիական վիշապի հետ ցոյց է առել Մանհարը, իսկ նրա նմանութիւնը Յունաց Պրոմէթէոսի հետ՝ ապացուցել է Հանը: Տիվոնի եւ Պրոմէթէոսի նման Լոկին էլ Տօր աստուծոց կաշկանդուած է այրում երեք ժայռերի վրայ: Նրա գլխին աստուածները կանգնեցրել են մի թունաւոր օձ, որի թնշը անդադար ծորում է բանտարկեալի երեսի վրայ: Լոկի կնիք Signa դարձաւ եւ թափուող թնշը մի լական, բայց երբ նա լեցնում է, այն ժամանակ մի քանի կաթիլներ ընկնում են Լոկի վրայ եւ նա այնպէս խիստ կուչ է գալիս որ շարժուում է ամբողջ երկիրը: Գրանից է առաջնում երկրաշարժը:

Առասպելի երկրորդ շրջանը, որի մէջ վիշապը վերջնականապէս հսկայի է փոխուում, բացի յունականից հանդիպում ենք նաև չեքքեսական, օսետական, ապրազական, վերական Ամիրանի մասին պատմածներում: Այդ շրջանին են պատկանում շատ հին գերմանական առասպելներ իրանց թագաւորների վերաբերեալ, ինչպէս Վարդու Մեծի, Բարբարոսայի մասին, որոնք խորքին մէջ են ընկած մի որևէ լեռան խորքում:

Սրանք ամենափառաւոր ազգային թագաւորներ են, որոնց վիճակուած է ամենահեռու ապագայում արթնանալ, երբ կը փոխուի աշխարհս եւ երբ նոր կենքեր կը սկսի Այդպէս մինեւ օրս Փրկիչի Բարբարոսան նստած է Արժհէյդերէ եւ պիտի նստի մինչեւ վերջին դատաստանը: Երբ նա դուրս գայ աշխարհ, քաշ կ'անի իր վահանը չոր ծառի ձիւղերից եւ ծառը կը կանաչի: Այն ժամանակ աշխարհի վրայ կը սկսին իշխել աւելի լաւ ժամանակակիցներ:

Ինչպէս որ Կաբարդիցիների Ելբրուսում բանտարկեալը հարցնում է իր պահապաններէջ. «Դձու՞մ են գառներ, բուսո՞ւմ է եղեգն», նմանապէս գերմանական կայսրը երբեմն երբեմն

քնից արթնանալով՝ հարցնում է. «Գեո սարի շուրջը թռչո՞ւմ են ագռաւներ, Գրական պատանին ստանալով՝ բացազանում է: «Երևակ դեռ պիտի 100 տարի էլ քնիմ»:

Վերջապէս դառնանք մեր սկզբում դրած հարցին Յունաց Պրոմէթէոսի կողմաստան առասպելներում երեւցող հսկայի հետ ունեցած առնչութեան: Կը տեսնենք որ այդ հարցի պատասխանը գտնում ենք այն մի շարք նմանութիւնների մէջ, որ գտանք առասպելները միմեանց հետ համեմատելով: Յոյները տարել են Աֆայից, ինչպէս միւս արիական ցեղերը, համարեալ լուր ազգերի մէջ խիստ տարածուած առասպելը, որ պարունակում էր լուսոյ աստուծոյ եւ վիշապի կռիւը, առաջինի երկրորդի վրայ ունեցած յաղթութիւնը, վիշապի լեռան մէջ փակուումը: Առասպելը վերջին ձեւը զարգացել է մանականց այն ազգերի մէջ, որոնք ծանօթ են հրաբուխների հետ: Եւտոյ Յունաց մէջ առաջ է գալիս մի նոր հարուստ, ըստ որում երկրային կրակը երկրից էր բերուած, եւ այն աստուածութիւնը որ մարդկանց կրակ է բերել, ներկայանում է, երբ ժամանակի ընթացքում հին հաւատալիքները սեղ եւ տալիս նորերի, եւ առաջին աստուածների սեղը բռնում են նորերը (Ողիւս պիականները), իբրեւ նոր աշխարհէրկով՝ Չէւսի՝ թշնամի, եւ անցնում է Տիտանների շարքը, որոնք ըմբոստներ են, հետեւապէս հաւասարում են հին վիշապին: Հասկանալի է, որ կրակի այդ հին աստուծն, երբ տիրող հանդիսանում են նոր կարգի եր, պէտք է հասնէր հին վիշապի վիճակը եւ առաջին աստուծները վերադարձում է ուրիշ անձնաւորութեան: Ինչպէս որ Չէւսի ժամանակակից Պրոմէթէոսը պէտք է ժայռի մեխուէր, նշնպէս նրանից առաջ մեխուել էր Տիփոնը՝ էլի նշն Չէւսի ժամանակակիցը:

Այս է Պրոմէթէոսի տիպի կանխիկաւորը (CADREAS): Թէեւ անկասկած այդ կանխիկաւոր անկարող է բացատրել մեզ գեղարուեսկական այն բոլոր նրբութիւնները, ինչ որ ներկայացնում է մեղ Յունաց արիստոսական եւ փիլիսոփայական հանձնարը: Յոյնի աշխատանքը մեր աչքում այնքան առաւել բարձրութիւն է ստանում, երբ մենք նրա Պրոմէթէոսի տիպը, ինչպէս մեզ ներկայացնում է Եսքիլէս, համեմատում ենք զանազան արեւելեան հրէաների հետ — Սահակի, Ամիրանի, Իսկայի, Շիրաբի, Մհերի հետ, որոնք անկասկած նրա ամենամեծ ցեղակիցները,

* Alban. Studien, I. 156.

* Grimm, Deutsche Sagen, Nr. 23 եւ Nr. 28.

Համապատկերներն են: Յոյները իրանց հերոսի պատժի տեղը տարել են Վոլկա: Բայց հաջիւթէ կարելի չէին սրանից եզրակացնել որ Պրոմէթէոսը Ասիայում է ծագում առած: Մեզ աւելի հաւանական է երեւում որ այն աշխարհագրական մանրամասնութիւնները, որ գտնուում են Հե-սիոդոսի մօտ, յետոյ են առաջ եկել, երբ առասպելը արդէն կազմակերպուած էր. եւ նրանով է բացատրուում որ Յոյները Վոլկասի հետ յարաբերութեան մէջ մտնելով, կարող էին ըսել այնտեղ լեռան վրայ միտուած հսկայի մօտին, եւ ննջողները որ նա իրանց Պրոմէթէոսն է: Մեզ ծանօթ է որ նրանց Հերակլէսը ճանապարհորդում է բոլոր յայտնի երկիրներում, երբ Յոյները տեղական աւանդութիւններում Հերակլէսին գործերը յիշեցնող նման կէտեր էին գտնում: Գիշերը իբրեւ օրինակ նմանապէս որ Հայոց Արայ գեղեցիկի մօտին պատմած առասպելը երեւան է գալիս Պղատոնի շարադրութիւններում: Այս բոլորը կարող են ծառայել մեզ հաստատելու մեր յայտնած կարծիքը թէ ինչ էր պատճառն որ Յոյները Պրոմէթէոսի կաշկանդման տեղը Վոլկաս են դարձրել:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԵՄՈՒԹՅԱՆ Ի ՀՈՒՆԵՐԱՐԻ

Վոլկին իրաւամբ՝ որով ամենայն ազգ իւր ընդհանրութեան ծառայութիւն մատուցանող եւ պարծանքն արծարծող որդւոց ու անդամոց միջնորդութեամբ կը քննայ ինք զինքն աշխարհածանօթ ընել, նա թէ աւելի եւս համարձակութեամբ՝ այսօրուան օրս բարձր ի գլուխ կը ծանօթացնէ նաեւ հայ ազգն իւր պատկաւ որդիքը դարուս կիրթ մասին: Վստահ ենք որ մանաւանդ հետաւոր ազգայինք առաւել խնդա-կցութեամբ եւ սրտի գոհութեամբ կ'ընդգրկեն այս մեր փոքր հրատարակութիւնը, զոր կեդր (Հայաբարդաբը) հրատարակուող հունգարերէն հայ ամսագիրքէն քաղելով «Հասկի» միջնորդութեամբ կը հրատարակենք¹:

Հունգարական պետութեան երեսփոխանաց սենեկին մանակից կեդրալ քաղաքին հայ անդամներուն համառօտ կենսագրութիւնն է հաղորդածնիս՝ հանգերձ իրենց լաւ յաջողած պատկերներով:

Կեդրալ (Szamosújvár, Սոմոշույվար) քաղաքիս առաջին երեսփոխաններն եղան Մարտիրոս

Նովագեան (Novák Márton) եւ Գալովը Աստուածատուրեան (Jakab Bogdán):

Մ. Նովագեանին նախկեաց մին՝ Ռումանիոյ ֆորշան քաղաքէն Աւստրալ գաղթական եկած է: Հայրն ֆորշանեան (ֆորշանցի) մականունը կը կրէր: Նովագեան ծնա Magyar Lásos (մաճառական լաբոշ) քաղաքը, ուր իւր ընտանիքն կալուածներ ուներ: Նովագեան բաց ի ընտանեկան պարտուց կատարմանէն՝ կը վարէր նաեւ սուրհանգակի վարչութիւնը: Երկայն ժամանակ ի գոհութիւն եւ յօգուտ հասարակութեան վարեց կեդրալ քաղաքիս գլխաւոր դատաւորութիւնը: այնպէս որ ի յիշատակ՝ քաղաքացիք իւր տան փողոցին՝ Դատաւորի փողոց (պիրովին-օրամը) անունը տուած էին, որ երկայն ժամանակ ալ նոյն անուամբ մնաց: Իրեն յանձնուած երեսփոխանական պաշտօնն եւս ըստ պատշաճի վարեց ի պարծանս քաղաքին: Մշտն արդիւնաւոր անձինք մի միակ յուսալից որդին 1848—9ին յեղափոխութեան ծագման ժամանակ՝ Վինտիշկիւէց սպարապետին հրամանաւ սպաննուեցաւ, խոր խոցելով հեռաւոր հօր սիրտը: Մ. Նովագեան մեռաւ 1851ին Յունիս 6-ին, ինքն եղաւ քաղաքիս հասարակավարչութեան վերջին դատաւորաց գլուխը:

Գալովը Աստուածատուրեան (Jakab Bogdán) ծնաւ Կոպպ-վառոտ (Gross-Wardein) քաղաքը 1809ին: 1827 Սեպտ. 1ին պաշտաման երդուեալ ըրաւ, ծառայեց իւր գրագիր ի Բեշտ եւ 1836ին եկաւ Կեդրալ, ուր նոյն տարին իւր առաջին գրագիր ընտրուեցաւ մինչեւ 1849 Յուլիս 9ը, երբ քաղաքապետութիւնն իրեն յանձնուեցաւ, զոր վարեց մինչեւ 1861 Ապրիլ 11, եւ յետոյ Աւստրալի վարչական ժողովոյն խորհրդական անուանուեցաւ: — Կեդրալի նկատմամբ ունեցած արդեանցը համար՝ ի ինչորեւց պատգամաւորաց սենեկին՝ ֆերդինանդոս Ի. իրեն աշխուկանութիւն շնորհեց 1848 Օգոստ. 19ին: 1861էն սկսեալ զանազան բարձրագոյն պաշտօններ յանձնուեցան իրեն. 1869 Մայիսի 1ին երկրագործական, արուեստական եւ առեւտրական պաշտօնաւարն մտաւ իւր խորհրդական: Չորս տարի ետքը Մեօրեյ կուսակալութեան առաջին կուսակալ անուանուեցաւ, ուր մնաց երեք տարի՝ մինչեւ 1876, որ տարին ինքնակամ պաշտօնէն հրաժարեցաւ: Սակայն 1876—1878 Կեդրալ քաղաքիս պատգամաւորութիւնն յանձն առաւ: Մեռաւ 1887 Նոյ. 22ին 78 տարեկան: Աստուածատուր Գորդուլեան (Korbuly Bogdán) ծնաւ 1803 Յունուար 9ին ի Կեդրալ.

¹ Ըմբռ. Նոյն թնթիւն 1892 տարւոյ Յունուարի թիւը: